



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

« 28 » 01 2017թ.

N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ ԲԱՆԱԿԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ հայրենակիցներ, սպաներ, ենթասպաներ, կրտսեր հրամանատարներ, սիրելի՛ զինվորներ.

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս բանակի 25-րդ տարեդարձի կապակցությամբ: Հայաստանի Հանրապետության պետական տոնացույցում այս տոնն իր ուրույն տեղն ունի յուրաքանչյուրիս համար: 25-ամյա հայոց բանակն իրականություն դարձավ Արցախում և Հայաստանի սահմաններում հերոսացած հայորդիների սխրանքներով և մեր ողջ ժողովրդի հավաքական ու անկոտորուն կամքով: Չոհաբերելով ամենաթանկը՝ իրենց կյանքը, մեր զինվորներն ու սպաներն ապրիլյան քառօրյա պատերազմում արիության ու հայրենիքին նվիրվածության շնորհիվ ևս մեկ անգամ կանխեցին թշնամու հերթական խարդավան գործողությունները: Մենք հպարտությամբ պետք է հիշենք մեր բոլոր հերոսներին և գլուխ խոնարհենք ազատության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների շիրիմների առջև: Առաջնորդվելով ազգ-բանակ գաղափարախոսությամբ՝ այսօր հայկական բանակը տարածաշրջանում կայացած և մշտապես կատարելագործվող կառույց է. մեր ժողովրդի անվտանգության պաշտպանն է, խաղաղ ու անվտանգ կենսագործունեություն ապահովողը, ինչպես նաև մեր երկրի առաջընթացի կարևորագույն երաշխիքը:

Այս տոնական օրվա առթիվ սպաներին, ենթասպաներին, զինվորներին, արցախյան հերոսամարտի և սահմանների պաշտպանության մասնակիցներին ու վետերաններին մաղթում եմ քաջառողջություն, խաղաղություն, մարտական բարձր ոգի և նորանոր ձեռքբերումներ՝ ի շահ մեր պետության հզորացման ու առաջընթացի:

 Հ.ՄԻՄՈՆՅԱՆ